




**«Հայրենիք» Ամսագիրը, ուր  
Վտարանդի Մտաւորականութիւնը Մշակեց  
ու Սերմանեց Յետ-Անկախութեան Սփիւռքի  
Մշակութային Զաղաքականութիւնը**

---

1918-1920 թուականների անկախ  
Հայաստանի ղեկավարութիւնը նպա-  
տակասալաց ու ի գին հսկայ գոհաբերու-  
թեան պայքարեց համաշխարհային  
մեծ ընտանիքում եւ ազգերի մրցա-  
դաշտում ապահովելու Հայաստանի  
անկախութիւնը: Դա դարձաւ գաղա-



փարախօսութիւն, դարձաւ հիմնական քաղաքականու-  
թիւն՝ որ որպէս հրամայական գերիշխեց ո՛չ միայն երկրի  
դիւանագիտական յարաբերութիւններում ու արեւելքից ու  
արեւմուտքից ներխուժած գաթիչների դէմ պայքարի ռազ-  
մադաշտում, այլ՝ հանրապետութեան կեանքի բոլոր ոլորտ-  
ներում, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, ընկե-  
րային եւ մշակութային անկախութեանը հասնելու գործ-  
նական քայլերով: Նոյնիսկ երբ այդ ղեկավարութիւնը իր  
յուսահատ, ճակատագրային քայլն էր կատարում հայ ժո-  
ղովրդին թուրքի եաթաղանից փրկելու որպէս մէկ ու միակ  
ճամբայ երկրի դէկը Սովետներին յանձնելու, Հայաստանի  
խորհրդայնացման համաձայնագրի մէջ դարձեալ անկա-  
խութեան գաղափարն էր արձագանգում: Հայաստանը պի-  
տի մնար անկախ ու կոչուէր Սովետական Սոցիալիստա-  
կան Անկախ Հանրապետութիւն:

Գիտենք, որ Հայաստանի խորհրդայնացումը սահուն  
չընթացաւ, չյարգուեց համաձայնագրի ոչ մի կէտ, Հայաս-



Robert E. Park-ի *The immigrant Press and its Control*<sup>1</sup> ուսումնասիրությունը, ուր հեղինակը տարագիր մամուլը յատկապես հետաքրքրական էր համարում այն բանի համար, որ դրա էջերում պատկերում է տարագիր համայնքի ներքին կեանքը եւ մշակութային նոր միջավայրին յարմարությունրա ճիգն ու ջանքը: Այնուամենայնիւ պիտի խոստովանեն, որ ուսումնասիրութեանս ընթացքում ինձ յայտնի դարձաւ, որ «Հայրենիք»ում, մանաւանդ առաջին տասնամեակում, աւելի քիչ են գաղութային ներքին կեանքի պատկերները, իսկ ճիգ ու ջանք յարմարուելու՝ չի երեւում: «Հայրենիք»ի դերը, որպէս ազդեցիկ ուժ, ձեւաւորել եւ իր հսկողութեան տեսադաշտում է պահել հայ համայնքի ընկերային վարքագիծը, կեանքն ու քաղաքական արեւելումը՝ աւելի քան արտացոլել է այն:

«Հայրենիք» ամսագիրը, իր մայր կազմակերպութիւն ՅՅԴի պէս 32 տարի առաջ, անհրաժեշտ կարիքից ծնունց: Նրա ծննդեան վկայագիրը կարելի է տեսնել 1922, Յուլիսի 1-8-ի Հ.Յ.Դ. Հիւսիսային Ամերիկայի 29-րդ պատգամաւորական ժողովի որոշումների մէջ, ուր շեշտուում էր ամսագրի անհրաժեշտութիւնը՝ «հրատարակել լուրջ ամսաթերթ մը»: բնութագրուում էր նրա վարքագիծը, դրա մէջ նշելով նաեւ «Ժխտել սովետական վարչաձեւի եւ տիրապետութեան գաղափարը. հաւատալով, որ այդ պարզապէս կցում է Ռուսաստանին եւ բացասում է մեր անկախ պետականութեան գաղափարին»:<sup>2</sup> 1922-ի Նոյեմբերից, որպէս «Հայրենիք» օրաթերթի տարիների ստեղծած վարքագծի խտացեալ շարունակութիւն, հրատարակուելու սկսեց «Հայրենիք» ամսագիրը:

<sup>1</sup> Robert E. Park-ի *The immigrant Press and its Control* (New York: Harper and Brothers, 1922).

<sup>2</sup> *Գեորգ Տոնայետեան*, «Հ.Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի Մէջ», Բ. Հասոր, (1910-1923), (Պոսթոն, 1995), էջ. 605:

